JANUARY-JUNE 2018
ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒՆԻՍ

NEWSLETTER
ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հայկական Կարմիր խաչի ընկերություն
Armenian Red Cross Society
Պարոնյան 21/1 Paronyan
Հայաստան, Երևան, 0015, Yerevan, Armenia

www.redcross.am
redcross@redcross.am

Երբ դպրոցը թիրախ է

- Մեր դպրոցը թիրախ է, ամեն պահի էլ կարող են կրակոցներ լինել, - ասում է Տավուշի մարզի սահմանամերձ Վազաշենի համայնքապետ Լորիկ Բադիրյանը՝ ցույց տալով դպրոցի պատին կրակոցների հետքերն ու աղյուսներով կիսով չափ փակված պատուհանները, - ամեն ինչ անում ենք, որ որքան հնարավոր է պաշտպանենք երեխաներին կրակոցներից ու բեկորներից:

Համայնքը Ադրբեջանի հետ 18 կմ սահման ունի, նախկինում տարեկան 2000 տոննա խաղող մթերող Վազաշենում հիմա ոչ մի վազ չի աճում՝ այգիների 30-40 տոկոսը մնացել է շփման գծի մյուս կողմում, ոռոգման ջուր չկա, պոմպերը վաղուց չեն աշխատում: 870 բնակիչ ունեցող համայնքի եկամտի աղբյուրը տնամերձերն են ու արտերկրից համագյուղացիների օգնությունը: Դպրոցն էլ նախկին 376 աշակերտի փոխարեն հիմա ընդամենը 68-ն ունի:

When the school is a target

“When the school is a target, shootings can happen every moment”, Lorik Badiryan, head of Vazashen bordering community in Tavush says, showing the signs of bullets on the walls and the windows partly closed by bricks, “We do everything possible to protect children from shooting and a spear”.

The community has 18 km border with Azerbaijan. Having 2000 tons of grape production yearly in Soviet time, now Vazashen has no single vine growing in the area, 30-40 percent of the vineyards now are on the other side of the contact line, the irrigation system is not functioning.
The main income for the community with the population of 870, are the households and financial support from the relatives working abroad. 68 pupils study at local schools, when this number was 376.

Այդ երեխաների համար է, որ Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ համայնքապետարանի հարևանությամբ պաշտպանիչ պատ ու խաղահրապարակ է կառուցել, որպեսզի խաղալիս նրանք պաշտպանված լինեն կրակոցներից:

Վազաշենը միակ համայնքը չէ՝ նպատակ ունենալով ապահովել Տավուշի մարզի սահմանամերձ համայնքների բնակչության, հատկապես երեխաների անվտանգությունը՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի և Գերմանական Կարմիր խաչի աջակցությամբ անվտանգ տարածքներ, խաղահրապարակներ ու պաշտպանիչ պատեր է կառուցել նաև Բերդավան, Վազաշեն, Չինարի, Ներքին Կարմիրաղբյուր, Այգեպար, Մովսես և Պառավաքար համայնքներում:

And for these children, Armenian Red Cross Society constructed a protective wall and play ground at the community center, to protect them from shooting.

Vazashen is not the only community in Tavush with this problem: aiming to ensure the safety of the bordering communities of, especially children, with the support of the International Committee of the Red Cross and German Red Cross, Armenian Red Cross Society has constructed safer spaces, play grounds and protective walls in Berdavan, Vazashen, Chinari, Narkin Karmiraghbyur, Aygepar, Movses and Paravakar.

In Berdavan community, sport hall has been renovated, and safer space is being constructed in kinder garden, to find shelter in case of shootings.

Բերդավան համայնքում վերանորոգվել է նաև դպրոցի մարզադահլիճը, իսկ մանկապարտեզում կառուցվում է ապահով սենյակ, որտեղ հնարավոր կլինի պատսպարվել ռմբակոծության դեպքում:

- Մեր դպրոցի դիրքն արդեն այնպիսին է, որ պաշտպանիչ դեր ունի՝ կրակոցների ու ռմբակոծությունների ժամանակ կարելի է պատսպարվել շենքի հետևում, - ասում է Բերդավանի համայնքապետ Սմբատ Մուղդուսյանը, - դրա համար էլ դրա մոտ կառուցվեց խաղահրապարակը, որտեղ երեխաները կարող են ապահով խաղալ:

Մարդասիրական օգնություն՝ սիրիահայ խոցելի ընտանիքներին

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը (ՀԿԽԸ)՝ ՀՀ և ՌԴ Արտակարգ իրավիճակների նախարարությունների աջակցությամբ և Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի հետ համագործակցությամբ, մեկանգամյա մարդասիրական օգնություն տրամադրեց Հայաստանում բնակվող 1200 սիրիահայ խոցելի ընտանիքների, սննդի փաթեթների տեսքով (ձեթ, բրինձ, հնդկաձավար, խտացրած կաթ): Օգնությունը տրամադրվեց ՀԿԽԸ կամավորների միջոցով:

Առաջին օգնության դասընթաց Բերքաբերի երեխաների համար

Տավուշի մարզի սահմանամերձ Բերքաբեր համայնքի դպրոցի 35 աշակերտների և ուսուցիչների համար Հայկական Կարմիր խաչի ընկերությունը Առաջին օգնության դասընթացներ անցկացրեց՝ «Նվիրիր հույս» ակցիայի շրջանակներում հավաքված միջոցներով: Դպրոցին հանձնվեցին 2 կրակմարիչ, երեխաները նաև տարհանման վարժանքի մասնակցեցին:

Դեկտեմբերի 9-ից հունվարի 7-ը Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, Հյուսիսային պողոտայում «Հույսի խանութի» միջոցով կազմակերպել էր դրամահավաք՝ հանրակացարանաբնակ միայնակ ծերերին և երեխաներին աջակցելու, ինչպես նաև սահմանամերձ գյուղերում Առաջին օգնության դասընթացներ կազմակերպելու համար:

Դասընթացների համար հավաքվել էր 363 060 դրամ: Դրանք կանցկացվեն նաև Վազաշեն ու Բաղանիս գյուղերում:

Արձագանաքող թիմերը պատրաստ են.

Հայկական Կարմիր խաչի ընկերության՝ Սյունիքի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Տավուշի և Երևանի արագ արձագանքման կամավորական թիմերը (10-15 մարդ՝ յուրաքանչյուր թիմում) ապրիլ – մայիս ամիսներին

“The position of school makes it a protective measure in case of shootings. That’s why the playground is placed in the school yard, where the children can play safely”.

Humanitarian aid for Syrian Armenian vulnerable families

Armenian Red Cross Society (ARCS), with the support of RA and RF Ministries of Emergency Situations and in cooperation with the Russian-Armenian Centre of Humanitarian Response, provided one-time humanitarian aid to 1200 Syrian – Armenian vulnerable families living in Armenia, in the form of food parcels (oil, rice, buckwheat, condensed milk). The Humanitarian Aid was provided with the help of ARCS volunteers.

First Aid for children of Berkaber

35 children and teachers participated in First Aid training in borderline Berkaber community, Tavush region, due to the funds raised in the frames of “Give Hope” Campaign. The school received 2 fire extinguishers, an evacuation drill was organized for children as well.

From 9 December to 7 January, Armenian Red Cross Society conducted fundraising campaign through “Hope Shop” at Northern Avenue, to support lonely elderly and children living in dormitories, as well as to conduct First Aid trainings in borderline communities.

AMD 363 060 was raised for the trainings, another two trainings will be conducted in Vazashen and Baghanis communities.

Ստեփանավանի տարածքային մասնաճյուղում հատուկ պատրաստվածություն անցան Առաջին օգնության, որոնողափրկարարական գործի, արտակարգ իրավիճակներում լրատվության և ԱՌՆ ոլորտներում: Նրանց տրվել են նաև հանդերձանք, թեթև փրկարարական գույք և Առաջին օգնության պարագաներ: Թիմերն արդեն պատրաստ են արտակարգ իրավիճակներին արձագանքելիս օժանդակել Փրկարար ծառայությանը: Դրանք ձևավորվել ու պատրաստվել են Բարելավված արտակարգ իրավիճակներին նախապատրաստում և համակարգված արձագանքում Հարավային Կովկասում ծրագրի շրջանակներում:

Մարդասիրությունը կփրկի աշխարհը

«Մարդասիրությունը նշանակում է հարգանք մարդու և նրա իրավունքների նկատմամբ: Մարդասիրությունն է, որ պիտի փրկի աշխարհը՝ կյանքը լցնելով միայն բարությամբ». գրում է Արարատի մարզի Սայաթ-Նովա գյուղի միջնակարգ դպրոցի XI դասարանի աշակերտուհի Անուշ Բաղմանյանն իր շարադրության մեջ, որով մասնակցել է Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից մայիսին անցկացված «Մարդասիրությունը գործողության մեջ» շարադրությունների մրցույթին՝ ընդգրկվելով հաղթողների շարքում: Մրցույթը

կազմակերպվել էր Մայիսի 8-ի՝ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի համաշխարհային օրվա կապակցությամբ՝ հանրապետության բոլոր մարզերի 3-ական դպրոցներում:

Մինչ մրցույթ հայտարարելը, նույն դպրոցներում ՀԿԽԸ կամավորները Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժման պատմության, հիմնարար սկզբունքների և գործունեության վերաբերյալ լուսաբանման դասընթացներ էին անցկացրել:

ՀՀ մարզային դպրոցներից մասնակցեց լուսաբանման դասընթացների, ստացվեց 468 շարադրություն, 99 լավագույնները պարգևատրվեցին:

Responding volunteer teams are prepared

Armenian Red Cross Society Rapid Response Volunteer teams of Syunik, Gegharkunik, Vayots dzor, Tavush and Yerevan (10-15 members in each team) participated in special trainings in April-May at Stepanavan territorial branch facilities, on First Aid, Search and Rescue, Information in Emergencies and DRR. They received special outfit, rescue equipment and First Aid kits.

The teams are now prepared to support the Rescue Service in responding to emergency situations.
They were formed in the frames of Improved Emergency Preparedness and Coordinated Response in South Caucasus (EmPrep) project.

Humanity will save the world

“Humanity means respect to human being and his rights. Humanity will save the World, filling the life with kindness”: this is a quote from, Anush Baghmanyan’s essay, a XI grade student from Sayat-Nova secondary school of Ararat region.

With this composition she participated in “Humanity in Action” an essay competition organized in schools of all RA regions by Armenian Red Cross Society on the occasion of World Red Cross and Red Crescent Day, and won the 1st place.

Before the Contest, ARCS volunteers conducted dissemination sessions of Red Cross and Red Crescent Movement history, Fundamental Principles and activities.

Վայոց Ձորի, Լոռու և Դիլիջանի մարզային ու համայնքային մասնաճյուղերը մրցույթը կկազմակերպեն սեպտեմբերին:

Մրցույթը պատանիներին ստիպեց ևս մեկ անգամ մտածել ու իրենց մտքերը շարադրել Կարմիր խաչի Շարժման հիմնարար սկզբունքներից առաջինի՝ Մարդասիրության մասին:

Մարդասիրական օգնություն հրդեհից տուժած գյուղացուն

Սնունդ, ծածկոցներ, ձմեռային ու ամառային կոշիկներ՝ մարդասիրական օգնության այս փաթեթները Վայոց ձորի մարզի Հորսի գյուղի բնակիչ 57-ամյա Վարոս Աբելյանին հանձնվեցին Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից:

Վարոս Աբելյանի տունը՝ ամբողջ գույքով, հոսանքի տատանման պատճառով բռնկված հրդեհից այրվել էր մարտ ամսվա սկզբին:

Հիմա նա կնոջ՝ Յուղիկ Սողոմոնյանի հետ հայտնվել է ծայրահեղ ծանր սոցիալական վիճակում, ու ստիպված ապրում է համագյուղացու տանը:

Փախստականների հարցերը՝ մարզային աշխատանքային խմբերի օրակարգում

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ ՄԱԿ-ի Փախստականների գրասենյակի հետ համատեղ, մարզերում փախստականների հիմնախնդիրներով զբաղվող բազմաֆունկցիոնալ աշխատանքային խմբեր ձևավորելու նպատակով համակարգող հանդիպումներ է անցկացրել ՀՀ Արմավիրի, Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Արարատի, Վայոց Ձորի մարզերի մարզպետարաններում: Մասնակցել են մարզպետարանների սոցիալական, կրթական և մշակութային բաժինները, մարզում գործող կրթական և ակտիվ հասարակական կազմակերպությունները՝ «Հայկական Կարիտաս», «Վորլդ վիժն», «Առաքելություն Հայաստան» և այլ շահագրգիռ կողմեր:

Հանդիպումների ընթացքում, փախստականների ներգրավումը և ինտեգրումը խթանելու նպատակով ներկայացվել են նրանց պաշտպանության միջազգային և ազգային չափորոշիչներն ու ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերը, ինչպես նաև քննարկել տարածաշրջանում փախստականների հիմնախնդիրները (դեպքերի քննարկում, արդի թեմաներ):

Դրա շնորհիվ աշխատանքային խմբերն ավելի արդյունավետ կարձագանքեն փասխտականների խնդիրներին և, անհրաժեշտության դեպքում, կկազմակերպվեն արտահերթ հանդիպումներ:

1221 students from the RA regional schools participated in dissemination sessions. 468 essays submitted, 99 authors of best essays received prizes.

Vayots dzor, Lori and Dilijan regional and community branches will organize the contest in September.

The contest gave an opportunity to the students to think and express their thoughts once again on Humanity, the first of Fundamental Principles of the Red Cross Movement.

Humanitarian aid to the family affected by house fire

Food, blankets, summer and winter shoes. humanitarian aid parcels with the mentioned items were distributed to 57-years old Varos Abelyan from Hors village, Vayots dzor region by the Armenian Red Cross Society.

Varos's house burned to the ground earlier this month as a result of a fire because of electricity fluctuation. Now he lives in neighbor's house with his wife Yughik Soghomonyan, in conditions of extreme poverty.

Refugee issues are being discussed within regional working groups

Armenian Red Cross Society, jointly with UNHCR, has conducted a series of regional coordination meetings in Armavir, Shirak, Aragatsotn, Gegharkunik, Ararat and Vayots dzor Regional Administrations, with the aim of establishing multi-functional working groups. Representatives of social, education and cultural divisions of Regional Administration , educational organizations and active NGOs, Armenian Caritas, World Vision, Mission Armenia and other stakeholders attended the event.

Մասնակիցները ողջունեցին նախաձեռնությունը՝ նշելով, որ նման խմբերի և այս ուղղությամբ շարունակական աշխատանքի կարիք կա, քանի որ մարզերում փախստականների իրավունքների մասին իրազեկվածությունը բարելավման լուրջ կարիք ունի:

Հանդիպումներն իրականացվում են «Փախստականների պաշտպանություն և տնտեսական ինտեգրում» ՄԱԿ ՓԳՀ կողմից ֆինասավորվող ծրագրի շրջանակներում: Տարվա ընթացքում նմանատիպ հանդիպումներ կկազմակերպվեն ՀՀ բոլոր մարզերում

Կայուն զարգացում՝ մարզերի երեխաների համար

- Երեխաները հատկապես շատ են սիրում նկարել համայնքի խնդիրները, ընտրում են ամենալավ նկարողին ու մանրամասն հրահանգում, թե ինչ պետք է նկարի, - պատմում է Անին՝ Տավուշի մարզային մասնաճյուղի կամավորը, որը համակարգում է Երեխաների կայուն զարգացում ծրագիրը, - շատ ոգևորված են մասնակցում, քննարկումների ընթացքում ավելի ազատ են դառնում:

Վերգինեն ու Անին Հայկական Կարմիր խաչի ընկերության կամավորներ են: Վերգինեն՝ 10 տարի է, ինչ Կարմիր խաչում է, իսկ Անին՝ մեկ: Եթե Վերգինեն աշխատել է մինչ այս Տավուշի մարզային մասնաճյուղի կողմից իրականացվող գրեթե բոլոր ծրագրերում, Անին դեռևս նոր է փորձ ձեռք բերում, սկզբում ներգրավվելով միայնակ տարեցներին սոցիալական աջակցության ծրագրերում, այժմ էլ՝ «Երեխաների կայուն զարգացում» ծրագրում: Երկուսն էլ Երևանի Պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի Հումանիտար գիտությունների ֆակուլտետից են:

- Կամավորությունը շատ բան է ինձ տվել, - ասում է Վերգինեն, - և շփման փորձ եմ ձեռք բերել, և երեխաների հետ աշխատելու և աշխատանք կազմակերպելու:

Aiming to generate refugee inclusion and local integration, international and national norms for refugee protection and programs funded by UNHCR and implemented by partners were presented, as well as the issue of refugees in the region (case discussions, actual topics) discussed. Due to the information, working groups will respond to the issues more efficiently and, in case of emergency, will organize special meetings.

The participants welcomed the initiative, mentioning, that there is a need in such kind of groups and continuous work in this direction, as there is much work to do in regions in terms of improving awareness level of refugee issues.

The meetings are being conducted in the frames of “Refugee protection and economic integration” project, funded by UNHCR. During the meeting, this kind of meetings will be organized in all the regions of RA.

Children resilience Project in regions

“The children like drawing community issues the most, they choose the one, who draws the best and instruct him in detail, what to draw”, tells Ani, Tavush Regional Branch volunteer, Children Resilience Project coordinator. “They participate with great enthusiasm, and feel more and more comfortable during the discussions”.

Ani and Vergine are Armenian Red Cross volunteers, Vergine is in Red Cross for 10 years, and Ani – 1 year.

If Vergine has been involved in almost all the projects, implemented by Tavush Regional Branch all these years, Ani is still gaining experience, providing social support to lonely elderly at the beginning of her volunteering, and now actively participating in Children Resilience Project.

Both of them graduated from the Faculty of Humanities, Ijevan Branch of Yerevan State University.

Անին էլ հավելում է.

- Առանց կամավորության կյանքը շատ տխուր կլիներ, միայն՝ դաս – տուն, իսկ հիմա ես շատ անելիքներ ունեմ, հատկապես որ մեր գործը շատերին է պետք:

Երեխաների կայուն զարգացում ծրագիրը, որն իրականացվում է Տավուշում, Սյունիքում, Արագածոտնում ու Գեղարքունիքում, սկսվել է Երևանում՝ 2014 թվականից՝ սիրիահայ երեխաներին սոցիալ-հոգեբանական աջակցություն տրամադրելու նպատակով: 2014-2016թթ. ծրագիրն իրականացվել է մոտ 480 սիրիահայ երեխաների համար՝ Երևանի 25 դպրոցներում: 2016թ-ից ծրագիրը շարունակվել է՝ ներառելով ևս 100 սիրիահայ երեխայի: Ծրագրի հաջողության մասին խոսում էին և մասնակից երեխաներն ու նրանց ծնողները, և ուսուցիչները, և Դանիական Կարմիր խաչի ներկայացուցիչները: Արդյունքները հաշվի առնելով որոշվեց ծրագիրն իրագործել նաև մարզերում:

ՀԿԽԸ կամավորները, անցնելով դասընթացներ, ձեռք բերելով համապատասխան գիտելիքներ և հմտություններ, 8-14 տարեկան երեխաների համար ութ պարապմունք են անցկացնում, որոնց ընթացքում քննարկում են, թե ինչ իրավունքներ ու կարիքներ ունեն երեխաները, ինչ դեր կարող են ունենալ իրենց համայնքի կյանքում, ինչ է բռնությունը և ինչպես պետք է խուսափել դրանից:

Կամավորները, երեխաների համար ընկերական և վստահության մթնոլորտ ստեղծելով՝ հնարավորություն են տալիս նրանց իրենց շրջապատի երևույթների մասին կարծիք ձևավորելու, դրանք ճիշտ ընկալելու և վերարտադրելու: Այդ ամենը կազմակերպվում է ինտերակտիվ, դերային խաղերի ու քննարկումների միջոցով:

Ծրագիրն իրականացվում է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի, Դանիական Կարմիր խաչի և անհատների աջակցությամբ:

Դիլիջանի դպրոցի աշակերտները՝ Հայկական Կարմիր խաչի կամավորները

Դիլիջանի միջազգային դպրոցի Կարմիր խաչի կամավորները աշխարհի տարբեր երկրներից են, տարբեր մշակույթներ են ներկայացնում, բայց բոլորին էլ միավորում է մարդկանց օգնելու նույն ձգտումը: Մեր աշխատանքի հիմնական թիրախը մեր համայնքի խոցելի մարդիկ են, ովքեր ամեն օր տարբեր մարտահրավերներ են հաղթահարում: Ներկայումս մենք աշխատում ենք երկու տարբեր նախագծերի վրա, մի քանի ծրագրեր էլ մշակման փուլում են: Տավուշի մարզի խոցելի ընտանիքների համար մենք վառելափայտ ենք հավաքում՝ ցուրտ ամիսների համար, նաև հագուստի հանգանակություններ ենք կազմակերպում կարիքավոր

"Volunteering gave me a lot", Vergine says, "You learn how to communicate, how to work with children and organize your work".

"Without volunteering the life would be too boring, we'd go out only for classes, but now I have many things to do, and the most important is, that many people need us", Ani adds.

Children Resilience Project, which is being implemented in Tavush, Syunik, Aragatsotn and Gegharkunik regions, was launched in Yerevan in 2014, aimed at providing psycho-social support Syrian Armenian children. In the following 2 years, 480 children participated in the project in 25 cities of Yerevan. The success of the project was assured by the children, their parents, teachers and Danish Red Cross representatives. Taking into consideration the positive feedback, it was decided to implement the project in Regions as well. Having obtained appropriate knowledge and skills at special trainings, ARCS volunteers conduct eight lessons for children, discussing their rights and needs, types of violence and the ways of avoiding it, and their roles in their communities.

Creating atmosphere of friendship and trust for children, volunteers, also contribute to the development of

ընտանիքների համար: Համագործակցել ենք Դիլիջանի համայնքային կենտրոնի հետ:

Մենք արդեն հինգ տարբեր ընտանիքների ապահովել ենք հագուստի փաթեթներով: Շատ հաճելի է տեսնել այդ երեխաների ժպիտները, և սա նաև շատ ոգևորում է մեր կամավորներին, քանի որ նրանք տեսնում են, թե ինչ է իրենց աշխատանքը նշանակում ուրիշների համար: Մենք հույս ունենք և հավատում ենք, որ ապագայում ևս բազմաթիվ նման առիթներ կունենանք:

Մենք ուզում ենք, ոչ միայն ընդգրկվել Կարմիր խաչի արդեն գոյություն ունեցող ծառայություններում, այլ նաև նախաձեռնել մեր սեփական նախագծերը: Այս ընթացքում մենք նոր հմտություններ ենք ձեռք բերել, որոնք շատ օգտակար են և գործնականում կիրառելի մեր ամենօրյա կյանքում: Մենք մեծ նվիրվածությամբ ենք աշխատել՝ ինտեգրվելով տեղական, ինչպես նաև Հայկական Կարմիր խաչի կամավորական համայնքին: Հիանալի է Կարմիր խաչի փորձառու աշխատակիցների և կամավորների հետ աշխատելը, քանի որ այսպես ենք կամավորության մասին գիտելիքներ ձեռք բերում:

Անդրեաս Սամուել Ջեփեսեն

Իրինա Խաչատրյան

Դիլիջանի միջազգային դպրոցի աշակերտներ, ՀԿԽԸ կամավորներ

children's live skills, their ability to communicate with peers and adults, raising self-confidence, promoting tolerance and constructive approach to problem solution. All the lessons are interactive, using role plays and discussions. Children participate in excursions and other entertaining events.

The project is being implemented with the support of the International Committee of the Red Cross, Danish Red Cross and individuals.

UWC Dilijan schools students volunteering for Armenian Red Cross

The Red Cross group of UWC Dilijan consists of volunteers from all over the world with vast cultural backgrounds, however all with the same aspiration of helping people. Our main target are the vulnerable people of our community, who face challenges daily. We are currently working on two different projects and are in the process of developing a few others. At the moment, we are collecting firewood for the vulnerable families of the Tavush region for the colder months, cooperating with Dilijan Community Center. We are also organizing clothes donations once again to families in need.

We have already supplied five different families with clothes packs. This was a very heartwarming experience to put a smile on these children's faces, and also very motivating for our volunteers to see what their hard work meant for others. We hope and believe that we will have many of such experiences in the future.

We aimed to not only join already existing Red Cross services, but also initiate our own projects and put all our planning into action. Red Cross experience helped us to develop many areas of our personal growth. While undertaking these challenges, we evolve new skills that are very useful and practical during our daily life. We put our whole commitment in it to enjoy the community work and get fully integrated into Armenian Red Cross community. It is amazing to work with experienced Red Cross staff and volunteers, as it helps us to gain lots of knowledge about volunteering.

Andreas Samuel Jepessen

Irina Khachatrya

UWC Dilijan schools students, ARCS volunteers